ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆ ԱՌ ՎԵՀԱԳՈՅՆ ՀԱՅՐԱՊԵՏՆ ՀԱՅՈՑ ՏԷՐ ՅԱԿՈԲ, Ի ՆՈՒԱՍՏԷ ՈՒՄԵՄՆԷ ԲԱՆԻ ՍՊԱՍԱՒՈՐԷ ՈՍԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ ՅԱՂԱԳՍ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԱՌԻՑ ԱՍՏՈՒԱԾԱՅՆՈՅ



Եծահրամանի իշխողիդ՝ և Վեհափառի հրամանաւ յանձին կալցուք զգործառնութիւն, որ ոչ է մեզ ճահ և ըմբոն, այլ յաւէտ այնոցիկ որք վսեմախոհք և հոգիընկալք են. մանաւանդ կիրթ ուսմամբ, և ներհմտացեալք ամենեքումբք մասամբք։ Քանզի բաղդատութիւն լեզուաց այլատարազից ընդ իրեարս համեմատել կարի դժուարին է և տաժանելի իրակութիւն. մանաւանդ տուչութիւն Հոգւոյն սրբոյ՝ ըստ բանի սրբոյ առաքելոյն Պողոսի. որ առ Կորնթացիս։ Եւ ես յաւէտ ըստ ինձ առն. որ յերկոցունցն եմ թափուր։ Բայց յուսացեալ ի Հոգին սուրբ յորդորմամբ նունոյ սրբոյ Առաքելոյ. և ի սրբանուէր աղօթս քո՝ արկանեմ գանձն իմ ի խորս այսորիկ ձեռնարկութեան. առ ի բաղդատել և ընդ իրեարս համեմատել զբարբառս Հայոց ընդ Դաղմատացւոց ստիքսելով և գլխատելով. և ըստ նոցայն համարոյ շարակարգելով սակս համաբարբառոյն, որ առ նոսա գոյ յօրինեալ այսինքն հանրոյ Աստուածայնոյ մատենին. հնոյ և նորոյ. որպէս առ մեզ միայն Աւետարանին սրբոյ տեսանեմք յարմարեալ. և ոչ ամենեցուն գրոց։ Իսկ Աւետարանին այսու ևս պակասի, զի նոյն գլուխն. թէ Մատթէոսին. և թէ այլոցն. ինքն առ ինքն ոչ ունի համաձայնութիւն. այլ առ այլս միայն։ Բայց Դաղմատացւոցն ուրանօր նոյն գիրքն ինքն առ ինքն ունի զհամաձայնութիւն եղեալ է այսու գրով. վեր և վայր՝ առ որս և զհամարաթիւսն եղեալ կրկնակիւք։ Նաև ցանգքն ըստ այսմ են յարմարեալք։ Վասն որոյ և մեք ով Հայր պատուական ըստ բարձրագունից հրամանաց քոց արարաք, գլխատելով և տնատելով, զհամարաթիւսն ևս առընթեր նմին դնելով բազմաւ աշխատութեամբ. քանզի

զի պատահեցաւ ուրեք առաւելութիւն ի մերս պակասութիւն ի նոսա. նոյնպէս անդրադարձութեամբ առաւելութիւն ի նոսա և պակասութիւն ի մերս։ Առ այսպիսիս լռեցաք և ոչ իշխեցաք առաւելուլ կամ պակասեցուցանել, թէպէտ ոչինչ գոյր վնաս։ Քանզի ուրանօր զթիւսն եմք ի բաց թողեալ՝ միով կամ երկոքումբք և կամ այլ աւելեօք թուօք, անդանօր մեր է պակաս գտեալ։ Իսկ ուրանօր բազմօք տողիւք կամ եչիւ, մանաւանդ մատենիւ իսկ, այն առ նոսա ոչ է գտեալ։ Նաև մատեանք, որք կարի յաւէտ են եղեալք տարաձայնք, և կամ խառնեալք, և կամ առաւելեալք և նուազեալք. այնպիսեացն զգլխահամարսն միայն եղեալ և զմանր համարսն ի բաց եմ թողեալ որպէս Բարուքայն՝ Յեսուայն՝ որ է Սիրաքայն և այլոց։ Իսկ ուրանօր մատեանն ամենեւին ոչ է եղեալ առ նոսա՝ զմերն միայն գրելով թողեալ եմ։

Նաև զմերականս համար ընդ նոցայն համարոյ շարակարգել անհնարին եղև։ Քանզի Դաղմատացւոցն երիւք համարիւք ամրափակեալ կայ՝ զորս խախտել ամենևին անհնարին է. մանաւանդ զի համաձայնութիւն հանրոյ Աստուածաշնչոյն նոցա համարաթուովն է և ոչ մերովս. զմերն և զնոցայն համայն կարգել անհնարին եղև, զի ի լուսանցսն տեղի ոչ մնաց. իսկ զմերն միայն գրելով համաձայնութիւն ոչ լինիւր, քանզի համաձայնութիւն նոցա համարովն է և նոցա ցանգովն, որպէս և տեսանէ սրբանձնութիւն ձեր։ Այլ և զփոքր համարն ոչ կարացաք հայկականօք տառիւք շարագծել, քանզի ընդ համարողականին եօթն գիրս ևս գոն դրոշմեալք. զի եթէ զհամարսն գրովք մերովք եղեալ զգիրսն զայնոսիկ ի բաց թողուաք անհնարին էր. քանզի ուրանօր զհամաձայնութիւնսն արարեալ են, ընդ համարաթուոյն և զտառսն զայնոսիկ են եղեալ՝ որպէս ահա յայտ է։ Վասն որոյ ոչ կարացաք բառնալ. զի մի ի համաձայնութիւնսն այլապէս գրեսցին և ներ տեղւոջ իւրեանց այլապէս, որովք խարբալումն լինի յուղողին։ Սակս որոյ զամենայն ըստ նոցայն շարակարգեցաք։ Բայց սակս անընդելութեան ձեւոյ համարողականին. աստ նախակարգեցաք մերով համարագրով. զմերսն հուպ նոցին եղեալ, զի նայսմ վայրում սոքօք վարժեսցին, և ներ տեղւոջ իւրում անտարակոյս ընթասցին, որոց ընթերցմամբ և տեղեկութեամբ լուսաւորեսցին, և դիւրաւ զզօրութիւնս գրոց Աստուածայնոց ի միտ առցեն շնորհօք և ի թիկունս հասութեամբ ամենասրբոյ Երրորդութեան։ Վասն որոյ հայցեմ ժտելով ի քումմէ պատուականութենէ և յամենեցունց պատահողաց. եթէ ախորժին կամք ձեր Տեառն շնորհ և մեծութիւն, զմեզ արժանի առնել ի յիշումն բարւոյ՝ և յաղօթս. ապա թէ ոչ զմեզ անբամբասանս և անքամահելիս թողուլ վասն Քրիստոսի. որ է օրհնեալ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյն. այժմ և անդրաւաւ յաւիտենիս. Ամէն։